

# 168Ժամ շաբաթաթերթ

№ 16(248)

15 փետրվար, 2007թ.

## Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը կարող է 10 անգամ ավելի հզոր լինել

«Մենք ունենք մտավոր սեփականության լուրջ պոտենցիալ, եւ մեզ թոյ՛ջ է պետք», - ասում է «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն Հովիկ Մուսայեյանը: Տարիների ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտը Հայաստանում բարձր տեմպերով աճ է արձանագրել: Սակայն, ըստ ոլորտի ներկայացուցիչների, այդ աճը կարող է ավելին լինել:

Ըստ ITF գործադիր տնօրեն **Գարեգին Չուգասյանի**, մեր երկրի պոտենցիալն այսօր 10 անգամ ավելի մեծ աճի հնարավորություն է տալիս: Հ. Մուսայեյանի խոսքերով էլ, SS ոլորտի ընկերություններն իրենց բիզնես-գործելաճով մոտ 20-30 տարով առաջ են մյուս ձեռնարկություններից:



2000թ. կառավարության որոշմամբ, SS ոլորտը հայտարարվեց տնտեսության գերակա ճյուղ: Շատերի կարծիքով, սակայն, դա զուտ հայտարարություն էր: Իհարկե, ստեղծվեցին ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը եւ SS զարգացման աջակցման խորհուրդը (SSՋԱԽ), բայց ըստ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» նախագահ Կարեն Վարդանյանի, «դա առիթ հանդիսացավ, որպեսզի իրենք մի քիչ հանգստանան պետության գործողությունների առումով»:



Այսօր այդ «հայտարարությունից» լուրջ քայլերի անցնելու, գործողությունների հստակ ծրագիր մշակելու ժամանակն է: Հենց այս խնդրին էլ նվիրված էր «Պրեսսինգ» ակումբի հերթական քննարկումը, որը վարում էր **Կ. Վարդանյանը**: Նա մասնակիցների ուշադրությունը հրավիրեց երկու կարևոր կետերի վրա՝ ինչպե՞ս անել, որ պետությունը դառնա ոլորտի ձեռնարկությունների ամբողջական

գործընկերը, եւ ինչպե՞ս կառուցել այն համագործակցությունը, որը թույլ կտա առկա լուրջ ռեսուրսներով լուծել SS ոլորտի հիմնախնդիրները:



«Ես, օրինակ, կգերադասեի, որ Հայաստանում կոշիկի բիզնեսը լիներ գերակա ճյուղ: Որովհետեւ կոշիկի բիզնեսը մարդիկ արդեն հասկանում են, իսկ բարձր տեխնոլոգիաները հասկանալու համար դեռ ժամանակ է պետք: Եթե գերակա ճյուղ ենք հայտարարել, ապա պետությանը պետք է ասենք, որ չխառնվի, մենք մեր խնդիրը կլուծենք, քանզի պաշտոնյաները չեն հասկանում այդ խնդիրը: Պետք է մենք խաղիկանոն մշակենք, պետությանը մի կողմ թողնենք», - ասաց «Արմինկո» ՍՊԸ գլխավոր տնօրեն **Անդրանիկ Ալեքսանյանը**: Նրա կարծիքով, պետությունը ոլորտի մասնակիցներին կարող է առաջարկել համապատասխան նախարարություն բացել, իսկ իրենց խնդիրը պետք է լինի պետությանը հարկեր վճարելը: Ա. Ալեքսանյանը խնդիր բարձրացրեց՝ ի՞նչ անել, որ պետությունը SS ոլորտի ընկերություններին չխանգարի:



«Դուք համոզված եք, որ եթե բացեք նախարարություն, կարող եք անել այն, ինչ ուզում եք: Կառավարությունը բացեց SSՁԱԽ-ը, ՁԻՀ-ը եւ ինչ-որ չափով հանգստացավ: Բայց եկեք չմոռանանք, որ այդ կառույցներն էլ մասնավոր խնդիրներ են լուծել», - ասաց ՀՀ Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության SS զարգացման բաժնի պետ **Ժենյա Ազիզյանը**: Նա նշեց, որ ժամանակ է պետք, որպեսզի ամբողջ տնտեսության համար այս ոլորտի անհրաժեշտության գիտակցությունը բարձրանա: «Մենք ինչո՞վ կարող ենք օգնել ձեզ: Մեր խնդիրը ո՞րն է», - հարցրեց Կ. Վարդանյանը: «Պետությունը ներկայումս ոչ մի իրավիճակի պաշտոնական վերլուծություն չունի: Պատճառը միայն այն չէ, որ չի ուզում ունենալ: Պատճառն այն է, որ կոնտակտ չենք կարողանում ստեղծել ոլորտի ձեռնարկությունների հետ: Իսկ եթե ես իրավիճակին տեղյակ չեմ, հետեւաբար չեմ կարող դրան աջակցել: Մեր նախարարությունն անում է տարբեր ոլորտների մոնիտորինգ: Երբ հերթը հասնում է SS-ին՝ վիճակագրության պրոբլեմ է առաջանում: Պետական աջակցության համար ճշգրիտ տվյալներ են պետք: Այսօրվա դրությամբ, մասնավոր ուսումնասիրություններն ենք հիմք ընդունում: Մոտավորապես կորզում եմ ինձ պահանջվող ինֆորմացիան, իսկ դա նորմալ չէ: Երբ պաշտոնյան գնում է որեւէ

երկիր, եւ այս ոլորտը պետք է ներկայացնի, եւ ծանոթության միջոցով եւ ինֆորմացիա քաղում: Վիճակագրական ծառայությունն էլ պրոբլեմ ունի մեր ոլորտի հետ: Մենք միայն պահանջատեր չպետք է լինենք: Ես էլ ձեզանից պահանջելու բան ունեմ: Տվեք ինձ իրավիճակ, խնդիր, որ ես իմանամ՝ ի՞նչ անել: Ասեք, որ եթե այս խնդիրը լուծվի, կգանք այս իրավիճակին, որպեսզի ես իմ ղեկավարներին կարողանամ դրդել այդ ուղղությամբ», - ասաց Ժ. Ազիզյանը:



«Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի տնօրեն **Հայկ Չոբանյանը** նրան հարցրեց, թե ինքն ինչպես է տեսնում վիճակագրության խնդրի լուծումը: «Փորձում եմ մի օր բոլորիդ համոզել, հավաքել, որ այդ խնդիրն առաջադրենք: Ես ձեզ հետ պաշտոնական կոնտակտ չունեմ», - պատասխանեց

նախարարության բաժնի պետը: Հ. Չոբանյանն էլ նշեց, որ պետությունը ՏՏ ոլորտի զարգացման վրա գումարներ է ծախսում եւ կարող է լուծել նաեւ վիճակագրության հարցը: Կ. Վարդանյանի հավաստմամբ, նույն խնդիրը նաեւ Եգիպտոսում են ունեցել: Ինչպե՞ս են նրանք լուծել այն: «Նրանք ունեն ՏՏ նախարարություն, որի շարժիչ ուժը ՏՏ Զարգացման գործակալությունն է (ITDA): Չնայած դա պետական մարմին է, պետության կողմից է ֆինանսավորվում, բայց դրա ղեկավար կազմի 60-70%-ը հենց մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ են: Եվ պետության հետ համատեղ են մշակում գործողությունների ծրագիրը: Այստեղ ՏՏԶԱԽ-ը գործնական մարմին չէ, խորհրդատվական է: Խոսքը գնում է մի մարմնի մասին, որը կառավարում է ՏՏ զարգացման բյուջեն», - ասաց Կ. Վարդանյանը: Ժ. Ազիզյանը հավաստիացրեց, որ տարբեր երկրներ տարբեր այցերի ժամանակ նաեւ այս ոլորտում համագործակցության խնդիրներն են բարձրացվում: «Հերթական որեւէ երկրի արձանագրային նյութը եւ ուղարկեցի բոլոր ընկերություններին՝ տեղեկացնելով, որ այս երկրի հետ միջպետական մակարդակով համագործակցության համաձայնագիր է ստորագրվել: Ոչ մի արձագանք չեմ ստացել մինչ օրս», - դժգոհեց նա: Հ. Չոբանյանին հետաքրքրում էր, թե ինչո՞ւ իրենք ոչ մի օր նման ձեռով չեն հավաքվել նախարարությունում եւ չեն քննարկել իրենց հուզող հարցերը: «Ես, օրինակ, բացի լսելուց, չգիտեմ, որ ձեր նախարարությունը ֆունկցիոնալ դերակատարում ունի այս ոլորտում», - ասաց Հ. Չոբանյանը: Քննարկման վարողն էլ նշեց, որ Ժ. Ազիզյանը միայն վերջերս է նշանակվել բաժնի պետ, ու հիմա իրենք, հանձինս նրա, իսկական գործընկեր ունեն նախարարությունում: Ա. Ալեքսանյանը կրկին անդրադարձավ այն


թեզին, որ պետությունը պետք է չմիջամտի SS ոլորտի զարգացմանը: «Պետությունը վերջերս մի օրենք է հնարել, որ բոլոր ցանց ունեցողները պետք է ունենան լիցենզիա, ու դրա գինը 100.000 դրամի փոխարեն սահմանել է 2 մլն դրամ: Ես հիմքերն ունեմ ասելու, որ ավելի լավ է պետությունը թողներ, որ այս ոլորտն իր ճանապարհով զարգանար: Պետական պաշտոնյաները ցանկացած երկիր կարող են գնալ ու ասել, որ այս երկրում կան մասնագետներ, կազմակերպություններ, որոնք կարող են երկրի երեսը պարզեցնել: Դա ստեղծվել է այն բանի շնորհիվ, որ պետությունը 10 տարի չի խառնվել այս ոլորտին: Հիմա պետությունը եկել է պատրաստի խաշի սեղանի շուրջ, ասում է՝ ինձ էլ տվեք: Մի բուպե, դու ի՞նչ ես արել մեզ համար, օրինակ, իմ հիմնարկի համար, որպեսզի ես պարտավորված զգամ ու խաշ տամ: Օրինակ, 7 տարի առաջ, երբ մի համակարգիչ էինք բերում, 4 օր մաքսատանն արյուն եմ թափել», - ասաց «Արմինկոյի» տնօրենը: Նա գտնում է, որ SS զարգացումը խաբեությունն չէ, քանզի այն ապրելու գործիք է: Նրա կարծիքով, պետությունը մասնակցի թե չմասնակցի, միեւնույն է՝ իրենք իրենց գործն անելու են: Մնում է՝ ճիշտ անել: Դրա համար Ա. Ալեքսանյանն առաջարկում է սկսել ստորին օղակներից՝ դպրոցից, համակարգչով աշխատել սովորեցնելու համար ուսուցիչների աշխատավարձերը բարձրացնել: «Հիմա դուք ուզում եք, որ պետությունը չխառնվի՞, թե՞ խառնվի», - հարցրեց Ժ. Ազիզյանը: «Պետությունը թող իր բոլոր ռեսուրսներն ուղղի դեպի դպրոց: Որքան փող ունի, դրանով թող մասնագետ կրթի: Մասնավոր հատվածը մնացած բոլոր հարցերը կլուծի: Ես առաջարկում եմ պետությունը թող 100 դոլարից 80-ը տա դպրոցներին, իսկ 20-ով էլ պահի մի համակարգ, որը խաղի կանոններ կմշակի», - պատասխանեց Ա. Ալեքսանյանը:



**Հովիկ Մուսայեյանը** ՀՀ կրթական համակարգի մակարդակը բարձրացնելու գործում պետության մեծ անելիքների վերաբերյալ համաձայնեց Ա. Ալեքսանյանի հետ: Նա նշեց, որ SS ոլորտի ընկերությունները ճարտարագիտական համալսարանն ավարտած, բայց վերապատրաստում չստացած մասնագետներին աշխատանքի չեն ընդունում: «Այսինքն, բուհերի կադրերին մասնավոր ընկերությունները չեն վերցնում աշխատանքի: Մեր ընկերությունները նրանց վրա հսկայական ծախսեր են անում, որը մեր խնդիրը չէ, այլ պետությանն է: Ոչ մի զարգացած երկրում ընկերությունները կադրերի վրա այսքան ներդրումներ չեն իրականացնում: Այսօր մենք ո՛չ ուսանողների թիվ ենք ապահովում, ո՛չ էլ որակ: Բայց բուհերն էլ իրենց

օբյեկտիվ պատճառներն ունեն՝ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումը եւ տեխնիկական բազայի բացակայությունը»,- գտնում է Հ. Մուսայելյանը: Նրա կարծիքով, ճյուղային նախարարություն պետք չէ ստեղծել, քանզի ՏՏ-ն ճյուղ չէ, այլ՝ համակարգ է: Ըստ Հ. Մուսայելյանի, անկախ նրանից, թե պետական ինչ կառույց է զբաղվում այս ոլորտի խնդիրներով, «պետության դերն առաջին հերթին պետք է հիմնվի կրթության վրա»: «Արտաքին աշխարհում եթե ասես, որ 10.000 ուսանող կա, որոնց պատրաստելու համար եւս 3-4 տարի է պետք, բավական է, որ ոչ ոք հետաքրքրված չլինի մեր երկրով: Սակայն կան առավելություններ, որոնց շնորհիվ ընկերությունները եկել են Հայաստան: Նրանք փող են դնում, կրթական մոդելներ են ստեղծում, որովհետեւ հայերը վստահելի են, շատ շուտ վերապատրաստվում են, տեխնոլոգիական լավ ավանդույթներ կան այս երկրում, բուհական համակարգն էլ շատ ճկուն է»,- ասաց Հ. Մուսայելյանը:

«ISMA» ընկերության փոխտնօրեն, ՀՊՃՀ դոցենտ **Սուրեն Մանուկյանի** հավաստմամբ, մեր դասախոսները փորձ չունեն, միջազգային պահանջների հետ շփվելու հնարավորություն չունեն, որովհետեւ չունեն պատվերներ: «Եթե պետությունը ստեղծի հնարավորություն, որ դասախոսները գիտական ոլորտից ստանան ոչ թե 50, այլ գոնե 200 դոլար, եւ այդ հնարավորությունը ստեղծվի պատվերների տեսքով, ապա դասախոսը կընդգրկի ուսանողներին, ասպիրանտներին եւ արդյունք կտա: Այդ դեպքում բուհը կդառնա բուհ»,- նշեց Ս. Մանուկյանը: «Դուք խոսում եք միայն ՏՏ ոլորտի մասին, սակայն բոլոր ոլորտներում է առկա միջազգային մակարդակին չհամապատասխանող դասախոսական կազմի խնդիրը»,- ասաց Ժ. Ազիզյանը: Իսկ Կ. Վարդանյանը նկատեց, որ եթե գտնում ենք, որ ՏՏ զարգացումն իսկապես պետք է լոկոմոտիվ լինի ամբողջ տնտեսության համար, ապա առաջին քայլը պետք է լինի այս ոլորտում կրթության մակարդակի բարձրացումը: «Պետությանը պետք է փաստերով ապացուցել, որ ՏՏ ոլորտի զարգացումը, որի համար պետք են նախեւառաջ կրթական, հետո այս կամ այն գործոնները, կարելու է ոչ միայն այս ոլորտի համար, այլեւ տնտեսության բոլոր ոլորտների զարգացման համար: Բանավոր բոլորս հասկանում ենք: Բայց դրան իրավական ուժ տալու եւ առաջ տանելու համար պետք են լուրջ փաստացի ապացույցներ»,- նշեց նախարարության ներկայացուցիչը: Գ. Զուգասզյանի խոսքերով, ՀՀ-ում ՏՏ ոլորտի հետ կապված քաղաքականությունն ունի որոշակի շրջանակներ: Օրինակ, կրթության պետական քաղաքականությունը մի ուղղություն է, իսկ հարկային,




ներդրումային, ինովացիոն քաղաքականություններն՝ այլ: Դրանք, ըստ Գ. Չուգասզյանի, ամբողջությամբ չեն դիտարկվում Հայաստանում: Նրա հավաստմամբ, պետք է համեմատել այլ երկրների քաղաքականությունների հետ՝ տեսնելու համար, թե ինչպե՞ս են նրանք զարգացրել իրենց SS ոլորտը: «Պարտադիր չէ, որ այդ քաղաքականությունը մշակվի նախարարություններում: Այն կարող է մշակվել առանձին մտածողական կենտրոններում, հետո առաջարկվել համապատասխան կառույցներին, որպեսզի վերջիններս իրականացնեն դա: Եթե նման կառույց չկա, ապա դրա ստեղծման խնդիրն էլ է դրվում: Ինչպե՞ս են այլ երկրներն այդ քաղաքականությունն իրականացնում, ի՞նչ տիպի կառույցներ կան: Մեկում նախարարություն է՝ ինչպես Ադրբեջանում, մի այլ տեղ՝ գործակալություն՝ ինչպես Շրի Լանկայում, մեկ ուրիշ տեղ, ինչպես Էստոնիայում, նախարարության կազմում ստեղծվել է մի դեպարտամենտ, որին բոլորը ենթարկվում են», - ասաց Գ. Չուգասզյանը: Սակայն նա այս ամենի հիմքում դնում է քաղաքական կամքը: «Մենք ի՞նչ անենք, որ այդ կամքը ձեւավորվի, որ ստեղծվի գործողությունների ծրագիր», - հարցրեց Կ. Վարդանյանը: Գ. Չուգասզյանն առաջարկում է նախ ճշտել ոլորտի ասելիքները, քանի որ SS ոլորտի իրազեկության բարձրացման խնդիր կա այսօր: Ըստ Գ. Չուգասզյանի, բացի դրամական գործիքներից, պետությունն ունի նաև ոչ դրամական գործիքներ: Օրինակ, համալսարանական կրթության մեջ ներդրումներ կատարելու փոխարեն, պետությունը կարող է այդ ֆունկցիան կատարելու համար մասնավոր ընկերություններին այդ մասով ազատել հարկերից: «Պետությունից պետք է պահանջես որոշակի ձեռով խառնվել, այլ ոչ թե չխառնվել: Եթե մենք ասում ենք, որ պետությունը չպետք է խառնվի մեր գործերին, ապա դա ավելի շատ պաշտպանողական դիրք է, որովհետև որքան ասում ես՝ մի խառնվի, այնքան ավելի շատ է խառնվում: Եվ վատ ձեռով է խառնվում: Պետությանը պետք է ասել. «Եթե պետք է խառնվես, ապա այս ձեռով պետք է խառնվես»: Իրականում լավագույն պաշտպանությունը հարձակումն է: Եվ մի հարց էլ կա. որքա՞ն ուժեղ պետք է լինես, որպեսզի քեզ հետ հաշվի նստեն: Ով էլ լինի, որ կուսակցությունն էլ կառավարի, մենք պետք է մեր ասելիքներն ու ասելու ձեւը ճշտենք: Եթե այդ երկու նախապայմանները կան, երրորդն արդեն Աստված է՝ կա՛մ կստացվի, կա՛մ ոչ: Այսինքն, առաջին երկուսը մեզանից են կախված: Ես կարծում եմ, որ նախընտրական շրջանն ասելու պահի առումով դրական է, քանզի հիմա քաղաքական գործիչների ականջները բաց են լրացուցիչ ձայների համար», - ասաց Գ. Չուգասզյանը:



«Յունիքումի» ընկերության գլխավոր տնօրեն **Արմեն Բադալյանը** համաձայն չէ քաղաքական կամքի դոմինանտ լինելու տեսակետի հետ: «Պետք է առաջին հերթին պետությանը համոզել, որ SS ոլորտը ֆինանսապես ձեռնտու է իր համար: Քաղաքական կամքն այն է, որ թուրքերին համոզենք, որ ընդունեն Ցեղասպանությունը: Իսկ տնտեսությունը մի քիչ ուրիշ մեխանիզմներով է աշխատում: Եկեք պարզապես պետությանն ապացուցենք, որ իրեն (անկախ իշխող քաղաքական կուսակցությունից) ձեռնտու է մեզ հետ միասին այս ոլորտը զարգացնել: Բայց դրա համար մենք պետք է գործ ունենանք կոնկրետ մարդկանց հետ, որոնք պատասխանատու են այդ ոլորտի համար», - ասաց Ա. Բադալյանը: Իսկ Ժ. Ազիզյանը գտնում է, որ ապագա իշխանավորներին պետք է այնպես համոզել SS ոլորտի անհրաժեշտության մասին, որ նրանք էլ, պաշտոն ստանալու դեպքում, կարողանան բոլորին համոզել դա:

**«Տնտեսություն և արժեքներ»** հետազոտական կենտրոնի նախագահ **Մանուկ Հերզոյանը** քննարկման մասնակիցների տեղեկացրեց, որ ՁԻՀ-ի պատվերով իրենք այժմ SS ոլորտի հետազոտություն են իրականացնում: «Մասնավորապես, կարող եմ նշել, որ երբ պետությունը մեկ ուսանող պատրաստելու վրա ներդրում է կատարում, ապա 7-րդ տարում հարկերի տեսքով այնքան եկամուտ է ստանում, որը տարեկան ապահովում է 120% շահութաբերություն: Բայց, իհարկե, հաշվարկն արված է ոլորտի 11 խոշոր ընկերությունների տվյալների հիման վրա: Մի ֆունդամենտալ խնդիր էլ կա, որի առջեւ այսօր կանգնած է SS ոլորտը: Դա մրցակցային մոդելի փոփոխության խնդիրն է, որովհետեւ մեր գնահատմամբ, մինչեւ այսօր ՀՀ մրցակցային մոդելը շատ հախուռն է ձեւավորվել: Մասնավորապես, օգտագործվել է ինտելեկտուալ պոտենցիալը՝ որոշակի խնդիրներ լուծելու համար: Օտարերկրյա ընկերությունները գնել են ծրագրավորողների խմբեր: Չի ստեղծվել պրոդուկտ, որը համաշխարհային շուկայում ստեղծեր որոշակի արժեք, կամ այդ խմբերը չեն ինտեգրվել համաշխարհային արժեքային շղթաների մեջ: Մրցակցային մոդելի առումով, ինձ թվում է, Հայաստանը պետք է ստրատեգիական որոշում կայացնի մասնավոր սեկտորի հետ միասին», - ասաց Մ. Հերզոյանը՝ հավելելով, որ դրա համար մեծ գումարներ պետք է ներդնել: Հ. Չոբանյանի կարծիքով, իրականում խնդիրն ավելի պարզ է: «Պետությունը ստեղծել է ինչ-որ մոդելներ, կառույցներ, որոնք, կարծես թե, դերակատար են այս ոլորտի կազմակերպման եւ զարգացման



համար: Բայց ակնհայտ է, որ որեւէ մոդել չի աշխատում: Այդ կառույցներում ի՞նչ է արվում, ինչ-որ տեղ ֆիքսվո՞ւմ է այդ արվածը, դրանց գնահատականներ տրվո՞ւմ են», - ասաց Հ. Չոբանյանը: Նա մի քանի հարցեր բարձրացրեց՝ որքանո՞վ է ՀՀ ՏՏ ոլորտի զարգացումը համապատասխանում համաշխարհային զարգացման տեմպերին, որքանո՞վ է դա արտացոլում զարգացման մեր պոտենցիալը, եւ որքանո՞վ ենք մենք կազմակերպված գնում այդ քայլերին: Նա կարծում է, որ պետությունն այստեղ դեր ունի, քանզի հայաստանյան շուկան փոքր է, ու բնականաբար, արտադրության մեծ մասը պետք է արտահանվի: Իսկ վերջինիս համար պետք են գիտական պոտենցիալ, էժան աշխատուժ եւ բարենպաստ հարկային համակարգ: Ըստ Հ. Չոբանյանի, առաջին երկու գործոններն այսօր Հայաստանում թուլանում են, ուստի պետությունը պետք է հետզհետե ուշադրություն դարձնի հարկային քաղաքականությանը, ոլորտին հարկային արտոնություններ տրամադրի, ինչպես բազմաթիվ երկրներում են արվում: Ընկերության ղեկավարը նշեց, որ պետությունը հակառակ ուղղությամբ չպետք է շարժվի ու լրացուցիչ ճնշումներ, լիցենզիաներ եւ պայմաններ չպետք է սահմանի ոլորտի մասնակիցների նկատմամբ: «Պետության դերը մեծ է նաեւ այն պատճառով, որ ներքին շուկայում տեղեկատվական տեխնոլոգիաների ամենամեծ գնորդը պետությունն է: Պետական տարբեր ոլորտների բարեփոխումների ծրագրում ՏՏ բաղադրիչը բավական լուրջ է: Կարծում եմ, համակարգված մոտեցում ցուցաբերելու դեպքում, այդ բարեփոխումների արդյունավետությունը նույնիսկ մի քանի 100 անգամ կարող է մեծանալ», - ասաց Հ. Չոբանյանը: Քննարկման մասնակիցները խոսեցին նաեւ ՏՏ ոլորտի ներկայացուցիչների համախմբվածության մակարդակից ու ոլորտի լոբբինգից: Գ. Չուգասզյանը գտնում է, որ ապագա իշխանավորներն այլ շահեր ունեն, ուստի նրանց դեպի այս ոլորտ գրավելու խնդիր կա: Գ. Չուգասզյանի կարծիքով, ՏՏ ոլորտի լոբբինգի աստիճանը զիջում է մնացած ոլորտներին:



«Մեր բոլոր խնդիրները հստակ են, մենք կարիք ունենք դրանք տեղ հասցնելու: Մենք մեր անհատական ուժը չենք կարող հավաքականի վերածել, որպեսզի կարողանանք ազդեցություն ունենալ որոշումներ ընդունողների վրա», - ասաց «Virage Logic» ընկերության գլխավոր տնօրեն **Վարուժան Մասարաջյանը**:

Ներկաները կատակով նկատեցին, որ վատ չէր լինի, եթե նրանցից որեւէ մեկը դառնար գործադիր կամ օրենսդիր իշխանության ներկայացուցիչ: Այդ դեպքում ոլորտի լոբբինգի հարցը մասամբ կլուծվեր: Ժ. Ազիզյանը նշեց, որ եթե ՏՏ ոլորտի

ձեռնարկությունների ղեկավարներն իրեն տնտեսագիտորեն ճշգրիտ հաշվարկներ ներկայացնեն ոլորտի վերաբերյալ, ապա ինքը կկարողանա դրանք փաստացի ապացույցներով ներկայացնել իր ղեկավարներին: «Իսկ ո՞վ կանի այն հաշվարկները, թե որքա՞ն ներդրումներ կարող էին գալ այս երկիր, բայց չեկան, օրինակ, միայն այն պատճառով, որ ոչ մի հարկային արտոնություն չկա SS ոլորտի համար: Այդ արտոնություններն իրականում ոչ միայն մեզ են պետք, այլ օտարերկրյա պոտենցիալ ներդրողներին: Երբ Թուրքիայում կառավարությունը քննարկում էր, թե ինչպես անեն, որ «Մայքրոսոֆթը» մտնի Թուրքիա, պարզ բանաձևեր գտան՝ հարկային ու մաքսային զրոյական արտոնություններ տվեցին: Ու ընկերությունը միանգամից 4 մլրդ դոլար գումար ներդրեց դպրոցներում, որպեսզի 10 տարի հետո այդ թուրք երեխաներին ընկերությունն օգտագործի որպես ինժեներներ», - նշեց Ն. Մուսայելյանը: Ժ. Ազիզյանն էլ նկատեց, որ «Մայքրոսոֆթը» Հայաստան մուտք գործեց առանց հարկային արտոնությունների: «Մի բան է հուշագիր ստորագրելը, մեկ այլ բան է իրական ինովացիոն ծրագրի տակ խոշոր ներդրումներ իրականացնելը», - պատասխանեց «Մինոփսիս Արմենիայի» ղեկավարը: «168 Ժամ» թերթի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանը շեշտը դրեց SS ոլորտը ներկայացնելու «լեզվի» վրա: «Ոլորտի նկատմամբ հասարակական պահանջ կարող է առաջանալ այն դեպքում, երբ հասարակությունն իսկապես հասկանա ձեր լեզուն, SS-ն չընկալի միայն որպես համակարգիչ կամ ինտերնետ: Բիզնեսամենների մեծ մասը նույնիսկ չգիտի, թե տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց ինչ կարող են տալ, ինչպես կարող են թեթևացնել իրենց աշխատանքը: Այն տպավորությունն է, թե դուք ապրանք եք բերել շուկա, բայց չեք պատմում, թե այն ինչով կարող է պետք գալ: Հասարակությունը դա չգիտի, որովհետև դուք պատմում եք ձեր լեզվով, բայց հասարակության հետ շփվելու այլ լեզուներ գոյություն ունեն: Օրինակ, երբ բիզնես ոլորտում հաջողված օրինակ եք ունենում, խոսեք դրա մասին», - ասաց Ս. Սեյրանյանը: Անդրադառնալով ոլորտի լոբբինգի մեջ մամուլի դերին, նա նշեց, որ լրագրողների համար մեծ դժվարություններ են առաջանում SS լեզուն հասկանալու և հասարակության համար «թարգմանելու» գործում: «Ինձ թվում է, SS ոլորտի PR-ը ֆունդամենտալ թերություն ունի: Ավելի շատ գովազդում են, թե, օրինակ, չիֆն ինչ է: Իրականում ավելի շատ պետք է ներկայացնել այդ ոլորտում հաջողված պատմությունները: Ու ոչ միայն ընկերությունների, այլև՝ անհատների, ուսանողների», - նկատեց Մ. Հերզնյանը:



Քննարկմանը ներկա էր նաև հոգեբան **Խաչիկ Գասպարյանը**: «Եթե ես՝ անձանոթ մի մարդ, ձեզ փողոցում կանգնեցնեի ու ասեի, որ փետրվարի 16-ին Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում պետք է կայանա Հոգեբուժության եւ հոգեբանության ամբիոնի 35-ամյակը, ի՞նչ կմտածեիք իմ մասին: Այսինքն, եթե ես ձեզ մի ինֆորմացիա տամ, որով դուք հետաքրքրված չեք, հավանաբար կմտածեք, որ ինձ մոտ ինչ-որ բան ճիշտ չէ», - ասաց նա: «Ես կմտածեի նաև, որ երեւի հետաքրքիր բան է, բայց մենք տեղյակ չենք: Այսինքն, կա եւ՛ մեր թերությունը, եւ՛ ձեր թերությունը», - պատասխանեց Ա. Բալդրյանը: «Մինչեւ որոշ մասշտաբներով հետաքրքրություն չստեղծվի, այս մասին խոսակցությունները կմնան որպես որոշ մասնագիտական խմբերի նախընտրություններ: Հոգեբանության մեջ կան անձի պաշտպանական մեխանիզմներ, եւ դրանցից մեկը կոչվում է վեհացնող ինքնախաբեություն: Երբ մենք հայտարարում ենք, որ ՀՀ-ն ՏՏ առաջնահերթություններով ընթացող երկիր է, սա երեւի թե ավելի շատ ցանկալի դաշտ է, քան իրական: Ես առիթ եմ ունեցել երկար տարիներ ապրել տարբեր երկրներում եւ աշխատում եմ Երեւանի Պետական բժշկական համալսարանում, որը համարվում է ՀՀ լավագույն բուհը, որտեղ տեխնոլոգիաները ոչ թե կաղում են, այլ շատ հետ են: Մի ուրիշ վտանգ էլ կա, որ գլոբալիզացիայի մեջ մենք կարող ենք հոգեբանական առանձնահատկություններ կորցնել, որովհետեւ գլոբալիզացիան հաշվի չի առնում մշակութային կամ էթնոհոգեբանական առանձնահատկություններ: Մենք մի ճանապարհ ենք ընտրել, որը ենթադրում է մեկուսացման միտումներ: ՏՏ-ն ենթադրում է ավելի շատ վիրտուալ աշխարհի հաղորդակցություն, քան հաղորդակցություն միմյանց հետ», - նշեց հոգեբանը: Կ. Վարդանյանը նրան հարցրեց, թե ՏՏ ոլորտի ներկայացուցիչներն ինչպիսի՞ մարդկային համագործակցություն կարող են կառուցել պետական պաշտոնյաների հետ: «Հոգեբանության կարծիքով, այնպիսի բանաձեւ չկա, որը կիրառվի ցանկացած չինովնիկի նկատմամբ եւ հաջողության հասնի: Այստեղ մոտեցումը շատ անհատական է: Միակ գործոնն այն է, որ հնարավորության սահմաններում նրանց մոտ դրդապատճառ ստեղծել՝ այս ոլորտով հետաքրքրվելու: Բայց եթե մարդը հետաքրքրված չէ, ապա ինքը չի էլ լսի», - պատասխանեց Խ. Գասպարյանը: Ա. Բալդրյանը գտնում է, որ նաև իրենք են մեղավոր, որ ոլորտի մոտ 200 ձեռնարկություններից շուրջ 20-ն են ակտիվ մասնակցում պետության մեջ ընթացող գործընթացներին: «Եվ հենց այդ 10%-ի չափով էլ պետության ուշադրությունն է մեր նկատմամբ», - ասաց նա: Կ. Վարդանյանն էլ նշեց, որ իրենք պետք է մտածեն ոչ միայն պետության հետ համագործակցությունը խորացնելու,

այլև միայն միջև հարաբերությունները սերտացնելու մասին: Հ. Մուսայելյանի համոզմամբ, ՏՏ ոլորտի ընկերությունների ղեկավարներն առավել համարձակ են իրենց տեսակետներն ու խնդիրները ներկայացնելու մեջ, քան այլ ոլորտների ներկայացուցիչները: Այս տեսակետի հետ Ա. Բալդրյանը համաձայն չէր. «Երբ հերթը հասնում է պետության դեմ խոսելուն, այդ խոսքն ասում են առավելագույնը 3-4 հոգի»: «Ուրեմն, մյուս ոլորտներից ոչ ոք ոչինչ չի ասում: Պետական այրերի հետ հանդիպելու մենք ավելի շատ հնարավորություններ ունենք: Այլ խնդիր է, թե որքանով են համակարգված մեր կարծիքները, եւ որքանով են համահունչ պետական մոտեցումներին: Մեր ոլորտն այդ առումով առավելություն ունի», - նշեց Հ. Մուսայելյանը: Քննարկման ամենահետաքրքիր փաստն այն էր, որ ոլորտի ընկերությունների ներկայացուցիչները թեեւ խոսում էին, թե իրենք համակարգված չեն, այնուամենայնիվ իրենց խնդիրներն ու հարցերը շարադրում էին բավական համակարգված: Նկատելի է նաեւ այն, որ ՏՏ ոլորտի առավելություններից մեկն էլ ընկերությունների միասնականությունն է, որը կարող է պետության հետեւողականության եւ քաղաքական կամքի առկայության պարագայում մեծ արդյունքների հասնել ոչ միայն այս ոլորտի, այլև ամբողջ տնտեսության համար: Իսկ այս քննարկման արդյունքներից, կարծում ենք, նրանք կարող են գործողությունների հստակ ծրագիր մշակել:

□